ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1478 25.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ:

Նախ և առաջ հարկ ենք համարում փաստել, որ տվյալ ՁՊՎ-ում ժամանակին մաքրման աշխատանքները պատշաճ չկատարելու արդյունքում, ներկայիս պահին ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում է շատ վատ վիճակում:

1. Առաջին, երկրորդ խցերի և ճաշասենյակի լվացարանները, սանհանգույցի սալիկը գտնվում էին շատ կեղտոտ վիճակում, որն արդեն իսկ մաքրել հնարավոր չէ: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3,4,5/*
2. Սանհանգույցը չունի օդափոխության համակարգ և ամբողջ տհաճ հոտը տարածվում է ՁՊՎ-ով մեկ, որին նախկինում էլ Դիտորդական խումբը կրկին անդրադարձել էր, սակայն միջոցներ չեն ձեռնարկվել:
3. Խցերի պատուհանների ձայնաազդանշանային համակարգը կրում է ձևական բնույթ, որովհետև չի գործում: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 6,7,8,9/*
4. Տեսակցության սենյակը չի համապատասխանում ՁՊՎ-ների ներքին կանոնակարգով նախատեսված սահմանումներին: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 10,11/*

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
մուտք № 4321
28 10 2014
8359
28 10 2014

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3085 «26» 11 2014թ.

Ձեր 25.10.2014թ. թիվ 2621/1478 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. 2. Նշված թերությունները արդեն իսկ վերացվել են: Սանհանգույցում տեղադրվել է օդափոխության համակարգ: Կատարվել են որոշակի վերանորոգման աշխատանքներ:

3. Խցերի պատուհանների չգործող ձայնաազդանշանային համակարգը ամբողջությամբ հեռացվել է, քանի որ այն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ով նախատեսված չէ: Պատուհանները մաքրվել և ներկվել են:

4. Տեսակցության սենյակը ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 119-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելու համար իրականացվում են աշխատանքներ, որոնք ավարտվելուց հետո դիտորդների խմբին կհայտնվի լրացուցիչ:

ՀՀ ոստիկանության շտաբ